12.08.2017թ.

Սևան համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանի շնորհավորանք-ուղերձը
Երիտասարդության միջազգային օրվա առթիվ

Սիրելի երիտասարդներ

Իմ, համայնքի ղեկավարի աշխատակազմի և համայնքի ավագանու անունից շնորհավորում եմ ձեզ Երիտասարդության միջազգային օրվա առթիվ:

Երիտասարդությունը յուրաքանչյուր երկրի կենսունակ երակն է, նրա այսօրն ու վաղը:

Ձեզանից յուրաքանչյուրը նոր գաղափարների և ձեռնարկների կրողն է երկրի շարժիչ ուժը:

Ձեր ստեղծարար մոտեցումներով, հետաքրքրիր մտահղացումներով դուք թարմություն և շունչ եք հաղորդում մեր իրականությանը՝ այն դարձնելով առավել իմաստավորված և բովանդակալից:

Դուք ուսանող եք և աշխատող, նորարար և գիտնական, ծնողներ եք և հայրենիքի զինվոր:

Ձեզանից մի ստվար հատված այսօր կանգնած է սահմանին, ապահովում է բոլորիս անվտանգությունն ու խաղաղությունը՝ դառնալով հերոսացման և հայրենասիրության լավագույն օրինակ:

Մեր համայնքում էլ քիչ չեն այն երիտասարդները, որոնց աշխատանքի, ձեռքբերումների, հաջողությունների, ստեղծարար մտքի շնորհիվ Սևանը դարձել է ներկայանալի, քիչ չեն նրանք, ովքեր իրենց հաղթանակներով և նվաճումներով քաղաքին բերել և այսուհետ էլ բերելու է ճանաչում և պատիվ:

Ես հպարտանում եմ մեր երիտասարդներով, ես էլ ձեզանից մեկն եմ և պատրաստ եմ ձեզ հետ միասին կյանքի կոչել Սևանի զարգացման ծրագրերը:

Այսօրն էլ ևս մեկ պատեհ առիթ է շնորհավորելու երիտասարդությանը, ինչպես նաև լսելի դարձնելու նրանց ձայնը, բաձրաձայնելու առկա խնդիրները, խոսելու երիտասարդությանն ուղղված քայլերի մասին:

Սիրելի երիտասրդներ

Մաղթում եմ բոլորիդ իմաստավորված տարիներ, ուսումնառության մեջ՝ հաջողություններ, աշխատանքում՝ նորանոր բարձունքներ, ծրագրերի իրականացման ճանապարհին՝ մեծ վերելք: Թող ձեզ ուղեկցեն վճռականությունն ու հաստատակամությունը, երազանքները նպատակ դարձնելու կամքը, ձեզ բոլոր նախաձեռնություններում ուղեկից լինեն նպատակասլացությունն ու հաջողությունը: